Հ Ր Ա Մ Ա Ն N 27-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«05» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2012 Թ. ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 2-րդ մասով, 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կարգապահական կանոնակարգը հաստատելու մասին» N 999-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ կետի է) ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում անցկացված ծառայողական քննության արդյունքներով ներկայացված եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետ Հ. Հարությունյանի միջնորդությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ծառայողական պարտականություններն ոչ պատշաճ կատարելու, քրեակատարողական ծառայողի վարկը նսեմացնելու, դատապարտյալի հետ անթույլատրելի կապի մեջ գտնվելու՝ դատապարտյալին փոխանցելու նպատակով ծառայության ներկայանալուց իր հետ արգելված փաթեթ քրեակատարողական հիմնարկի բնակելի գոտի անցկացնելու փորձ անելու համար Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի կրտսեր մասնագետ Համբարձում Զավենի Մկրտչյանի նկատմամբ կիրառել ծառայությունից ազատում կարգապահական տույժը և 2012 թվականի սեպտեմբերի 5-ից նրան ազատել քրեակատարողական ծառայությունից:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ